ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ


ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am

N 02/05/1532
27 03 2018թ.

<<ԱՐՄՆՅՈՒԶ>> ՓԲԸ ՏԻՄԱՏԻԿԱ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ
ՊՐՈԴՅՈՒՍԵՐ ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ՓԻԼՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Փիլոսյան,

Ի պատասխան ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին հասցեագրված Ձեր գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող մանկապարտեզների աշխատակազմերի ֆինանսավորումը կատարվում են համայնքային բյուջեներից:

Սևանի թիվ 2 «Զարթոնք» և Գավառի թիվ 5 մանկապարտեզներում կատարվում են հիմնանորոգման աշխատանքներ, որոնք, ըստ համայքների ղեկավարների տված տեղեկատվության, շահագործման կհանձնվեն համապատասխանաբար՝ ս/թ մայիս և հուլիս ամիսներին, իսկ Լճաշենի մանկապարտեզում մասնակի վերանորոգման աշխատանքներն ավարտվել են, ու այն կգործի ս/թ ապրիլ ամսից:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նախապես Ձեզ ուղարկված մանկապարտեզների ցանկում տեղի է ունեցել տեխնիկական սխալ և Արծվանիստի մանկապարտեզը հայտնվել է գործող մանկապարտեզների ցանկում, որն իրականում չի գործում:

Հարգանքով՝

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ


Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
Կատարող՝ Հովիկ Սիրականյան
Հեռ. 060650621